

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԸ

ՃՕՆԴԵՐԸ

Արդևն կատարած իրազեթիւն է,
հայ աւաների գրամի 1300 ամենակի
և ազգայութեան 400 ամենակի յարե-
լիւանի առիթով՝ հրատարակ են գրած
երկու անհրաժեշտ ֆանդեր՝ զարգացան
ու գրականք:

Քնն կատարած, որ գրանք բոլորով են
մեր կեանքի անսխալաբար պահանջ-
ներէն, որ թէ հայ գաղտնիք և թէ հայ
գրականութեանք միշտ աչմով իրենց
գոյութեանը քարշ են առնել զանազան
աշխատանքով միջոցներով, որոնց հրա-
տարակից չքանալը, անհետ կորչելը՝
այնքան ճամբանակիս հրամայական
պահանջն է:

Մենք պայծառորէն գիտակցում ենք, թէ ինչպիսի արժէք ունեն դպրոցն ու գրականութիւնը հայ ժողովրդի կուլտուրական զործում, թէ որպիսի վսեմ դեր է վերագրւում կուլտուրայի այդ երկու նոր զործաններին:

Արեւի, մենք չենք որ պիտի խոչընդոտը լինենք այդ ֆոնդերից մէկն ու մէկին, այլ ընդհակառակը, խորապէս գիտակցելով ու համոզւած լինելով, որ աշխատուող հայ ժողովրդի փրկութեան գերազոյն ֆակտորները չենք գրանց. դպրոցն ու դպրութիւնն են. որովհետեւ գրանք են մտաւոր հարստութեան ամենակական ֆակտորները, նետաքար այդ երկու ֆոնդերն էլ մեզ համար ունեցել են և ունեն գերազանց արժէք:

Միանգամ ընդմիջ մեզ համար այս աշխուս լինելով հանգիստ, սակայն, մենք իր ժամանակին յայտարարեցինք, թէ մենք դեմ ենք թէ դպրոցական և թէ որեւէ այլ ժողովրդական բնոյթ կրող ֆոնդ՝ զնելու էջմիածնի տրամադրութեան տակ, նրա զեկափարութիւնը յանձնելու է հայ ժողովրդից ընտրւած մի՛ ըստ ամենայնի վստահելի մարմին ձեռքը:

Այժմ երբ արդէն հիւսք է գրւած դպրոցական ֆոնդին, մենք վերստին պարտք ենք զգում շնորհիւ, որ այդ ֆոնդը շարժի Յայ լուկ էջմիածնի տրամադրութեան տակ, նրա զեկափարութիւնը յանձնելու է հայ ժողովրդից ընտրւած մի՛ ըստ ամենայնի վստահելի մարմին ձեռքը:

Ու դպրոցական ֆոնդի ներկայ իրաւատէրները պարտաւոր են այս մասին լրջօրէն մտածել և ապագայ դժգոհութեանց տեղի չտալու համար, այժմեանից միջոցներ ձեռք առնել իր քնարերարար դնելու այն ուղղակի հայ ժողովրդի տրամադրութեան տակ:

Ինչ վերաբերում է գրական ֆոնդին, մենք շատ ուրախ ենք, որ էջմիածնի, հակառակ իրան եղած առաջարկութեանը, մերժեց ասել այն իր հովանաւորութեան տակ: Որովհետեւ մեր ժամանակներում ինչ քան որ ընկել է էջմիածնի ձեռքը, ապա շատ է դժուարացել յետ ասել նրանից այն:

Առում ենք՝ լու է, որ գրական ֆոնդն էլ չընկու նրա ձանկը և նա այսօր փաստօրէն գտնուում է ժողովրդի՝ ժողովրդական այն հաստատութեան ձեռքին, որ անցեալ տարի ձընուող առաջ՝ շայն գրողների ընկ. անունով: Եւ այդ նոյն ընկ. վարչութիւնը, մեր կարծիքով, մեղաւոր է, որ այնքան ուշացրեց գրական ֆոնդի յայտարարութիւնը. քանի որ այդ ընկերութեան նիւնիւրը չէնք՝ նպատակ ունէր գրական ֆոնդի նիւնուրը: Արեւի՛ ընկ. վարչութեան առաջնակարգ գործը պիտի լինէր որ առաջ գրական ֆոնդի կազմակերպուէր:

Աւագաւ նա, բայց լու է ուշ քան երբէք:

Այսօր, արեւի, և գրական ֆոնդը նրա պարտք է գրւած:

Մենք հաւատում ենք, որ հայ ժողովրդը պիտի կարողանայ ի յայտ բերել պայծառ գիտակցութիւն և լայն շարժումով ընդառաջ գնալ նաև այդ ֆոնդին:

Մեզ համար ոգևորիչը ներկայումս քանակը չէ, այլ որակը. այսինքն՝ թէ ինչ շարժող հայ մասսան ժամանակցութիւն է ցոյց տալու այդ ֆոնդին:

Հարիւրները, հազարները չենք մենք սպասում ենք հայ ժողովրդի մէն մի անհատից, բազմաթիւ կողակները

կուսակներով կարող են կազմել մի պատկառելի գումար:

Եւ գրական ֆոնդը սպասում է այդ նախրական կողակներին:

Վարդաշու

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հոկտեմբերի 17-ին կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը ժամանեց Քիֆլիսի քաղաքը տանական կերպարանք էր ընդունելով ժամը 5-ին Փոխարքայի գնացքը եկաւ կայարան, ուր նրան դիմաւորեցին, Փոխարքայի պաշտօնակատարը, քաղաքապետական մասի պաշտօնակատար անաստոր Վատացին, ուղղափար հողերականութիւնը, հայ նոգ. ներկայացուցիչները թիմիս առաջնորդ Մեսրոպ կախողողոսի գլխավորութեամբ, միւս գաւանդութիւնները ներկայացուցիչները և այլ բարձրաստիճան անձինք: Կայարանից փոխարքան քաց կառքով, իսկ կոմսուհին աւտոմոբիլով եկան պալատ, ուր նրանց դիմաւորեց քաղաքապետը մի ճառով, մատուցանելով աղ ու հաց, իսկ կոմսուհուն թարմ ձաղկկփունջ: Քիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտութիւնը թէ պետական և թէ հայոց ծրագրան՝ ներկայ էին Փոխարքայի գալուտեան:

◆ Փոխարքայի կարգադրութեամբ Քիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտութիւնը, երկէ հոկտեմբերի 18-ին աղատուած էին պարապմունքներից: Թիմիս առաջնորդի կարգադրութեամբ պարապմունքներ չկար նաև հայոց ծրագրան դպրոցներում 18-ին 19-ին և երկուշաբթի 21-ին հոկտեմբերի:

◆ Թիմական տեսուչ պ. Յոզ. Տէր Միրաքեանը ընդհատելով քաղաքի դպրոցների ստուգութիւնները, այսօրուանից վերսկսելու է շրջագայութիւնները Քիֆլիսի թիմում ըսկեցելով Ախալքալաքից:

◆ Կերակր հոկտեմբերի 20-ին Չուբալովի անւան ժող. տանը, ժողովրդական համալսարանի վարչութիւնը հայ տաների դիւտի 1500 ամսակի և ապագրութեան 400 ամսակի առթիւ կազմակերպում է մի դասախօսութիւն: Կրդասախօսի Ն. Աղրախանը շայն տաների գիւտի և առաջին ապագրութիւնը նիւթերի մասին: Սկիզբն է առ. 10 և կէս ժամին:

◆ Ժողովրդական տանը, կիրակի հոկտ. 20-ին կրկնակերպուի գրական ստաւտ, համերգային բաժնով: Սկիզբը առաւօտեան 12 ժամին:

◆ Հոկտ. 15-ին նահանգապետ Չերնեաւսկու նախագահութեամբ և մասնակցութեամբ բարձրաստիճան պաշտօնական անձանց ու գիւղատնտեսների, կայացաւ մի խորհրդակցութիւն, որի նպատակն էր մտածել թէ ինչ կերպ զեմտուային միջոցներով Քիֆլիսի նահանգի ազգաբնակչութեան գիւղատնտեսական կարիքներին օգնութեան հասնել: Սյդ զեմտուային նախահաշուով նախատեսուած է 10 գիւղատնտեսական շրջան 1. Ախալքալաքի, 2. Լոււայ, 3. Մանգլիսի, 4. 5. Լագոզադի, 6. Դուշէթի և Թէօնէթի, 7. Վերին Ալազանի, 8. Ախալցխայի, 9 և 10 շրջանը Գորւայ գաւառն է: Բացի գիւղատնտեսներից մատնանշուել է և երկու ինստրուկտորի կարևորութիւնը: 1914 թ. որոշել է նրաւերել առայժմ 5 գիւղատնտես իւրաքանչիւր 3000 ր. ոռճիկ և 840 ր.